

րող պահել և գործադրել, վասն զի՝ ուսումնասէր չէին, և մանաւանդ անփոյթ էին ուսման և գրականութեան. ինչպէս և Քրիստոնէական կրօնին, ապա թէ ոչ՝ ազգովին չէին կրօնափոխ լինել, և մոռանալ իսպառ Քրիստոնէական կրօնը, հայրենիքը, գրականութիւնը, եւայլն . որոց համար Խորէն վարդապետ Ստեփանէն Մ Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգմանութեան ծանօթութեան մէջ (Ս. Պետերբուրգ. 1889. յերես 264 ծանօթութիւն 700) գրէ «Աղուանների այբուբենը վաղուց կորած է, և մի ձեռագիր չկայ աղուաններէն գրված»:

Աղուանից ազգի մնացորդը համարվում են այն 2,3000 հայերն, որք ասվում են Ուտիացիք և բնակվում են Նուխոյ նիթ և Վարդաշէն և Սուլթան Նուխի գիւղերումն և խօսում են Ուտիարէն, որոց լեզուով գրուած Տէրունական «հայր մեր» ազօթքը ասն հետեւեալն է:

«Ափրէյիցի Կօնջուխ բէշի Խուս Գրիստոս, ամին. Եախճէշիյօ բէշի հուն ալանու, բաճա բաքի ձի վի հարեղան չխարկուսուն, վի բաքէղատուն, վի հակըլ, վի հէթար, ալանու դա օղկա, շում բէշի համէշա թատա, եա դա դէ բարթա, եա թատալադօն, եա մա թաշա. եախ մէղաճրօյբօշ, քի վի է չխարկուսուն, դա գօրշավա ախիր զինալցրի . ամին»:

Որը ընծայել է ինձ հոգելոյս Գէորգ Գ. Կաթուղիկոսը, որին ընծայ էր ուղարկել Ըաքոյ գաւառի Դարբայ գաւառակի Կիւրգազուլ գիւղի հայրապետ քահանայն, զանազան գիտնական նկարներով զարդարուած մի տետրակի մէջ գրուած՝ որ ինձ մօտ է:

Աղուանից մնացորդը են նաեւ Ըամախույ գաւառի Մատրասայ գիւղի 500 տանից աւելի հայերն և Դուբայի գաւառի Խաշմազ և Քիլվար գիւղերի 150 տանից աւելի հայերն, որոնք ամենքը խօսում են ֆարս-հրէարէն խառ բառով: Մատրասեցուց բարբառով գրուած Տէրունական ազօթքը, և մի խօսակցութիւն գրեցի զրքիս . . . երեսում Մատրասայ գիւղի ստորագրութեան մէջ:

Աղուանից պատմութեան մէջ (Մովսէս Կողանկատուացի) հետեւեալ քաղաքների և տեղերի անուանքն են երեւում, որոց